Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2022 թվականի դեկտեմբերի 21-ի N 3 - 2 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Դ. Ռ. Գալոյան
21 դեկտեմբերի 2022 թ.

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (այսուհետ՝ համալսարան) օտարերկրացի ուսումնառողների կրթական ծրագրերի կրեդիտային հենքով ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները:

2. Ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքի ստուգման հետ կապված հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն կարգով, կարգավորվում են համալսարանում գործող համապատասխան կանոնակարգերով և իրավական ակտերով:

3. Համալսարանում օտարերկրացի ուսումնառողների համար կազմակերպվում են նախապատրաստական դասընթացներ, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր:

4. Օտարերկրացի ուսումնառողների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական գործընթացը կարող է կազմակերպվել այլ ժամանակացույցով: Պարապմունքները կարող են կազմակերպվել նաև մոդուլային ցիկլերով՝ ապահովելով ուսումնական պլանում ներառված լսարանային և արտալսարանային ժամերի ծավալը:

5. Օտարերկրացի ուսումնառողների նախապատրաստական դասընթացները կարող են կազմակերպվել աշնանային և գարնանային կիսամյակների ընթացքում, ցանկացած ժամանակահատվածում՝ համաձայն հաստատված ուսումնական պլանի:

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

6. Նախապատրաստական դասընթացների մոդուլները գնահատվում են մեկ գործոնով՝ **20 միավորային համակարգով**:

7. Նախապատրաստական բոլոր դասընթացները դրական արդյունքով ավարտած ունկնդիրներին տրվում է համապատասխան ավարտական հավաստագիր, որի հիման վրա նա կարող է ուսումը շարունակել բակալավրիատում կամ մագիստրատուրայում՝ բակալավրի որակավորման առկայության պարագայում:

8. Համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերն իրականացվում են գիտելիքների ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգի կիրառմամբ: Ուսումնառողի ամփոփ գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում գնահատման մի քանի գործոնների և դրանց կշիռների հիման վրա՝ **20 միավորային համակարգով**:

9. Ինչպես ստուգարքով, այնպես էլ քննությամբ ավարտվող մոդուլների համար բագմագործոնային գնահատման համակարգը կարող է ներառել հետևյալ գործոնները.

Բակալավրիատում՝

1) հաճախումներ և ընթացիկ ակտիվություն,
2) ուսանողի անհատական աշխատանք (գրավոր),
3) ամփոփիչ ստուգում:

Մագիստրատուրայում՝

1) ընթացիկ ակտիվություն,
2) գիտահետազոտական աշխատանք (գրավոր),
3) ամփոփիչ ստուգում:

10. Բակալավրիատում անհատական աշխատանք պարունակող մոդուլների համար «հաճախումներ և ընթացիկ ակտիվություն» գործոնի առավելագույն գնահատականը սահմանվում է **8 միավոր**, իսկ անհատական աշխատանք չպարունակողների համար՝ **10 միավոր**: «Անհատական աշխատանք» գործոնի առավելագույն գնահատականը սահմանվում է **2 միավոր**: «Ամփոփիչ ստուգում» գործոնի առավելագույն գնահատականը սահմանվում է **10 միավոր**:

11. Մագիստրատուրայում գիտահետազոտական աշխատանք պարունակող մոդուլների համար «հաճախումներ և ընթացիկ ակտիվություն» գործոնի առավելագույն գնահատականը սահմանվում է **6 միավոր**, իսկ գիտահետազոտական աշխատանք չպարունակողների համար՝ **10 միավոր**: «Գիտահետազոտական աշխատանք» գործոնի առավելագույն գնահատականը սահմանվում է **4 միավոր**: «Ամփոփիչ ստուգում» գործոնի առավելագույն գնահատականը սահմանվում է **10 միավոր**:

12. Ուսումնական տարվա սկզբին յուրաքանչյուր առարկայի կամ մոդուլի գնահատման գործոնները, գիտելիքների ստուգման ձևը (գրավոր կամ բանավոր) և դրանց կշիռները ներկայացնում է համապատասխան առարկան կամ մոդուլը դասավանդող ամբիոնը կամ դասախոսը մոդուլի համառոտ ծրագրում (syllabus):

13. Յուրաքանչյուր մոդուլի գնահատման համար պարտադիր են «հաճախումներ և ընթացիկ ակտիվություն» և «ամփոփիչ ստուգում» գործոնները:

3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՀԵՌԱՑՎԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ

14. Ուսումնառողը համալսարանից կարող է հեռացվել՝

1) ակադեմիական ոչ բավարար առաջադիմության համար,

2) փորձառության հաշվետվության պաշտպանությունից դրական գնահատական չապահովելու դեպքում (վերջնական հաշվարկային գնահատականը փոքր է 40-ից (առանց կլորացման) և (կամ) ուսանողը չի ներկայացրել փորձառության հաշվետվություն և (կամ) չի մասնակցել փորձառությանը),

3) «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոնները միևնույն ուսումնական տարվա ընթացքում 2 և ավելի անգամ խախտելու և կարգապահական տույժերի ենթարկվելու դեպքում: